ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/28

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14670-17 գրությամբ «Գամշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԷԵԲՊՆ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.08.2017թ. թիվ 703 գրության հիման վրա, 10.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Գամշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ ԷԵԲՊՆ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԷԵԲՊՆ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն 04.08.2017թ. թիվ 703 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետով՝ կից Ձեզ եմ ներկայացնում «Երևանի ՋԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար «ԵՐՋԵԿ-ԳՀԱՇՁԲ 02/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Գամշին» ՍՊ ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գնումների բաժնի պետ Հայկ Սարգսյանը:

3. **<u>«Գամշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գամշին» ՍՊԸ-ն 21.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն ընկերության կարիքների համար «ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 02/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Գամշին» ՍՊԸ-ն «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գնման ընթացակարգը համակարգող հանձնաժողովի կողմից որակավորման փաստաթղթեր իրենց տրամադրելու վերաբերյալ ծանուցում չի ստացել, իրենց իսկ կողմից չի կատարվել հանձնաժողովի 24.07.2017թ.-ի թիվ 2 արձանագրության 2.2 կետի պահանջը՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացնելու հրավերով սահմանված փաստաթղթերը: Ուստի «Գամշին» ՍՊԸ-ն չէր կարող հանձնաժողովին տրամադրել որակավորման փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովի «Գամշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախաձեռնած գործընթացը համարում եմ ապօրինի և դուրս գնումների մասին օրենքի շրջանակներից»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Ավետիս Մելիքյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/28 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2017թ. թիվ 03/26-3/14670-17 գրությունը, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 04.08.2017թ. թիվ 703 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ԵՐՋԵԿ-ԳՀԱՇՁԲ 02/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՐՋԵԿ-ԳՀԱՇՁԲ 02/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 24.07.017թ. ժամը 12:30 նիստի թիվ 2 և 03.08.2017թ. ժամը 16:00 նիստի թիվ 3 արձանագրությունները, Ընկերության 21.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությունը.

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՐՋԵԿ-ԳՀԱՇՁԲ 02/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գամշին» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 24.07.017թ. ժամը 12:30 նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 2.2 կետով Հանձնաժողովը որոշել է հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ներկայացնելու հրավերով սահմանված փաստթղթերը՝ թիվ 5, 5.1, 5.2 հավելվածները, նախկինում կատարված պայմանագրերի ակտերի պատճենները, աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 03.08.2017թ. ժամը 16:00-ին կայացած նիստին արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 25.07.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած «Գամշին» ՍՊԸ-ին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև հուլիսի 28-ը) էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել համապատասխան փաստթղթեր: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը որոշել է «Գամշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, մերժել:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է դիմել Պատվիրատուի ղեկավարին՝ «Գամշին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազոր մարմին ուղարկելու նպատակով, քանի որ ի հայտ է եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով սահմանված անգործություն:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 17.08.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ էլեկտրոնային համակարգի միջոցով չի ստացել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ Պատվիրատուի համապատասխան ծանուցումն, ինչը, ըստ Ընկերության ներկայացուցչի, ընդունելի չէ:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ նշված ծանուցումը սահմանված ժամկետում Հանձնաժողովի կողմից Ընկերությանը չի ուղարկվել, սակայն նշեց, որ

հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանն է տրամադրվել Հանձնաժողովի 24.07.017թ. նիստի թիվ 2 արձանագրության պատճենը, որը, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, պարունակել է Հրավերով սահմանված փաստթղթերը ներկայացնելու՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ, բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղն զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները:

• 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով «Գամշին» ՍՊԸ-ին չի ուղարկվել ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցում:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության էլեկտրոնային փոստին որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը չուղարկելով և Ընկերության հայտը մերժելով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Գամշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.08.2017թ. «Գամշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ